



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

891.99
7-13

1905p.

17.07.2013

ՀԱՅԿ

19 NOV 2011

291-99

7-13



ՀԱՅԿԱՍՏԱՆԻ
ԳՐԱԳՐԱԿԱՆ ՔԱՆՈՒՄ



ԹԻՒՆ 1

Ա. ՄԱՆԱՆ

ԹՐՔՈՒՀԻՆ

(ՄԻՋՆԵՂՊ ՄԸ ԵՂԵՍԻՈՅ ԿՈՏՈՐԱՆԷՆ)



ԳԱՀԻՐԷ

Տպագր. Ե. ՅՈՐՈՍԵԱՆԻ

1905

17.07.2013

49477



ՅԱՌՍ.ՉԱԲԱՆ



«Արշարյանի», «Լուսաբեր»ի և «Հորիզոն»ի մեջ, անցած Յունուարին հրատարակուած մեր մի յայտարարութիւնով, որ ազնուաբար հիւրընկալուեցաւ յիշեալ քերթեռուն Կողմէն, մեր «Ժողովուրդ» կիսամետային յարգելի ընթերցողներուն կը ծանուցանեիմք որ հիշանդութեան պատճառաւ ամսաւեայ կերպով ստիպուած էիմք դարեցնել հրատարակութիւնը քերթին, որ տուած էր իր 22րդ քիւր, և իր երկրորդ տարեշրջանը շրացնելու համար պակաս մնացած երկու քիւերուն փոխարեւ պիտի տար 30-35 էջերէ քաղկացեալ վեպիկ մը:

Մեր այդ խոստումը կատարած և մեր պարտքն ազատած կ'ըլլանք՝ ձրիաբար ուղղելով ներկայ հասոթիկը «Ժողովուրդ»ին այն ամեն բաժանորդներուն, որոնք իրենց բաժնեգիրը վճարելու փաշիականիստութիւնն ունեցան:


Ինչպէս այն ևեռակին ճակատը դրուած մի քանի քառերեկ պիտի հասկցուի, այս հրատարակութիւնով ընթերցումի և ինքնագարգացման նոր և հստակաւստիկ ապարեզ մը բանալու կը ձգնեիմք մեր կարողութեան չափով՝ յտաջողիմստեր ազգայիններու առջեւ: Այս հրատարակութեան պիտի յաջորդեն նորից աշխատութիւններ այլ և այլ նիւթերու վրայ՝ քարգնանաբար, ինքնուրոյն կամ նորից ներկնակներու գործերէն արտաստուներ: Վիպական, պատմական, կենսագրական, աշխարհագրական, գիտական, տեղագրական հրատարակութիւն-

6133 - 70

ներով պիտի ջանանք անխացել «Ժողովուրդին Մասե-
նադարան»ը այն յոյսով որ երե ոչ մեզի օգնող, զեր մեր
ապրկնային ձեռնարկը կսաստեղագործերու աւելի կարող
հետևողներ պիտի ունենանք, որով պիտի գործեն այն
համագումարով քե մեր ներկայ ողբայի կացութեան միակ
հեղինակը՝ աշխարհային գործերու մասին մեր քանձ
զգիտութիւնը եղած է:


* * *

Այլ եւ այլ ենթադրութեանց տեղի չսաշու համար
պիտի կը զգանք շատերու՝ 1. այս տեսակ հրատարակու-
թիւններ, որոշեալ ժամանակի պատճառով հանդարտու-
մէն գտնի ըլլալով, նուազ յոգնեցուցիչ են հրատարա-
կողին համար: 2. «Ժողովուրդ»ը վերսին հրատարակե-
լու գաղափարէն հրաժարած չենք: Կիսանկատայն դար-
ձեալ պիտի սխի յոյս տեսնել երբ մեկն զմեզ ի վիճակի
զգանք. հակառակ պարագային պիտի փութանք անոր
վերջնականապէս դադարուելը ծանուցանել:



Թ Ր Ք Ո Ւ Հ Ի Ն

(ՄԱՋԱՂԳ ՄԸ ԵՂԵՍԻԱՅ ԿՈՏՈՐԱՅԷՆ)



Մ.

Աւստրիական Մարի-Թերեզա չողենաւով Լարնա-
քայէն Ս. զէքսանդրիա Կ'երթայի, ընկերակցութեամբ
Կիլիկիցի Յ. Շ. Ի. զոր Կիպրոս ճանչցած էի: Այս ան-
ձը ուղեղի տկարութիւն ունէր, զոր՝ կարծեմ՝ ստա-
ցած էր իր բնագաւառը, թրքական խժողութեանց
պատմութիւնները լսելով՝ եւ երբեմն ալ ականատես
ըլլալով: Իրեն այնպէս կուզար որ իր անձը ամենա-
կարեւոր որս մ'էր թուրք սոսիկաններուն համար,
եւ ամեն օտարականի, շատ անգամ ալ քաջածանօթ-
ներու մէջ կը կարծէր տեսնել լրտեսներ, որոնք իբր
թէ Կիպրոս եկած էին միմիայն զինք ձերբակալելու
մասնաւոր եւ որոշ նպատակաւ: Սակայն ինքը՝ հե-
ռուէն կամ մօտէն՝ յարաբերութիւն ունեցած չէր յե-
ղափոխականութեան հետ: Ստէպ կը պատահէր որ,
երբ մի քանի բարեկամներու հետ պտոյտի ելած է-
ինք կամ սրճարան կը նստէինք, յանկարծ Յ. Շ.
Կիլիկիցի եւ կը փախէր, վասն զի նստողներու կամ
անցնող զարձողներու մէջ զէմք մը կատկածելի ե-
րեւցած էր իրեն: Կարծես կը լրտեսէր լրտեսներ՝ որոնք
իրեն համար միայն գոյութիւն ունէին:

Երբ չողենաւը սահելով մրափող ջուրերուն վը-
քայէն ուղղուեցաւ զէպի Պէյրութ եւ Կիպրոսի լեռ-

ները ամպերու հետ զրկախառնուեցան, Յ. Շ. ինծի ցոյց անուա երկու եզնարածներ, զորոնք քանի քանի անգամներ տեսած էինք Լարնաքա եւ որոնք ոչ խար ու եղ կը տանէին Բօր-Սայրա:

— Գիտե՞ս, ըսաւ, ասոնք վստահելի անձեր չ'են:

Ջանացի իր գաղափարը փոխելու, զիտել տալով թէ այն մարդեր աշխարհիս ամենէն ապիրատներն ալ ըլլային, անկարող էին իրեն վստահելու շոգենաւին մէջ, եւ որովհետեւ թրքական նաւահանգիստ մը ելլելու հարկադրուած չէր, անոնցմէ կամ ու եւ է անձէ մը վախնալու պատճառ մը չ'ունէր:

Բայց կը տեսնէի որ ի զուր կը պատճառարանէի:

Պարագայ մը ծայրայեղութեան հասցուց Յ. Շ ի սարսափը:

Նոյն իրիկուն Մարի-Թերեզ հազիւ խարոխած էր Պէյրութի առջեւ, որ տասնեակ մը ոտտիկաններ շոգենաւին մէջ խուժեցին: Ջգացի որ ընկերս՝ զոզահար ձեռքով՝ թեւս կը բռնէր եւ ազաւներուն կափկափումը որոշապէս լսեցի: Ճշմարտութիւնն ըսելու համար, ես ալ յուզուած էի: Այն ասին յիշեցի որ Կ. Պօլսոյ առջեւ թուրք կառավարութիւնը յաջողած էր փախտականներ առնել օտար շոգենաւներէն . . .

Սակայն ոտտիկանները կէս ժամ ետքը մեկնեցան՝ հետերնին տանելով վաղեմի ոճրագործ մը, որ Իզմիրէն փախած էր եւ որու մասին Պէյրութի կառավարիչը հեռագիր ստացած էր:

Իստանուլսոս ժամ մնացինք յիշեալ նաւահանգիստին առջեւ: Այս միջոցին Յ. Շ. բնաւ երեւան չ'ելաւ, այլ անկիւն մը կծկտած մնաց առանց ուտելու: զրեջէ անդադար ջուր միայն կը խմէր: Աչքերը անսովոր փայլով մը խոշորցած էին եւ ձայնը խոպոտցած էր:

Շոգենաւը հինգ ժամէ ի վեր Եաֆային ուղղութիւնը բռնած էր, երբ Յ. Շ. ձեռքէս բռնեց, զիս ամայի անկիւն մը տարաւ եւ ըսաւ,

— Հեռագիրը տեսա՞ր:

— Ո՞ր հեռագիրը:

— Նաւապետին ուղղուածը:

— Ե՞րբ:

— Հիմայ նաւապետին յանձնեցին:

Որովհետեւ Մարգօնիին անթել հեռագիրը տալուին ծնած չէր, մարդուն երեսը նայեցայ անարեկամ:

Աչքերը խոռոչացած եւ այտերը ամենադեղեցիկ կարմրութիւն մը ստացած էին: Ձայնը սուլումի ելեւէջներն ունէր եւ շուրթները ձեղքրտուած էին: Սոսկացի:

— Ի՞նչ գրուած էր հեռագրին մէջ, հարցուցի:

— Նաւապետը հրաման ստացաւ զիս կամ կախելու, կամ ծովը նետելու եւ կամ Բոր Սայրտի ոտտիկանութեան յանձնելու:

Յ. Շ. խենթեցած էր. . .

Դիւրահասկնալի մտատանջութեան մը մէջ ինկայ, նաւատիէ մը խնդրեցի որ պահ մը հսկէ ընկերոջս վրայ, եւ փութացի փնտել Սուրիացի բարեկամ մը, որուն Պէյրութէն շոգենաւ մտնելը տեսած էի, բայց հետը տեսնուելու ժամանակ չէի ունեցած տակաւին:

Ալֆրէտ Պ. մեծ վաճառատան մը կը պատկանի եւ գրեթէ միշտ կը ճամբորդէ աշխարհիս շորս կողմը: Ճշմարիտ ֆրանսացիի մը պէս զուստարան է, առանց անոնց մեծամասնութեան թեթեւամտութիւնն ունենալու: Եւ՝ ինչ որ լաւագոյն է՝ ճշմարտախօս է: Կը խօսի, կը պատմէ, կը ճտեղ առանց սեթեւեթի, առանց վերապահութեան, այլ մեծ պարզութեամբ եւ ամենայն անկեղծութեամբ:

Երբ զինքը գտայ, խիստ զբաղեալ էր երկու օրիորդներու եւ մէկ տիկնոջ հետ, որոնց կը բացատրէր հանդարտ ծովի վրայ ճամբորդութեան հրապօրյները:

Ընկերոջս վիճակը յայտնեցի իրեն:

— Ի՞նչ կը տեսա՞ւ, հարցուց:

— Ո՞չ:

— Լաւ կ'ըլլայ եթէ անգամ մը տեսնէ, թէեւ

մեծ հաւատք չ'ունիմ այդ պարոններուն գիտութեան
 եւ կարողութեան վրայ, բայց սովորութիւնը յար-
 գենք պատասխանատուութենէ զերծ մնալու համար
 Բժիշկը զննեց հիւանդը եւ ըսաւ,

— Զիդերը սաստիկ զրդուած են, ուշադրու-
 թիւն ըրէք որ աղէտք մը չ'պատահի, տուր զհրնայ
 օգտակար բլլալ, ինչպէս կրնայ ալ վիճակը սաստ-
 կացնել: Մէկ խօսքով առայժմ ընելիք բան չ'կայ,
 բայց միայն ուշադրութիւն:

— Ես քեզի բան մ'ըսե՞մ, յարեց Ալֆրէտ Պ.
 մեծ ցաւերու մեծ դեղեր, կ'ըսեն: Այս մարդը ան-
 տեղի, յիմար, երեւակայական վախի մը զոհն է:
 Եթէ ես իրեն ահուելի, քսամնելի եւ իրական դէպք
 մը պատմեմ թերեւս հակազգեցութեամբ կը բժշկուի:
 Ամէն պարագայի մէջ բան մը չ'ենք կորսնցնելու:

— Պարոն բժիշկը ինչպէս կը դաննէ այս առա-
 ջարկը, հարցուցի բժշկին:

— Անպատահութիւն մը չ'եմ տեսներ, պատաս-
 խանեց բժիշկը. հակազգեցութեամբ բուժուած հի-
 ւանդներուն ցանկը երկայն է, եւ եթէ ձեր պատ-
 մութիւնը կարճ է, ես ալ կը փափաքիմ ձեր ունկն-
 գիրներէն մին ըլլալ:

— Այդ պատիւը պիտի ընէ՞ք մեզի, գոչեց Ալ-
 ֆրէտ Պ.: Ուրնմն իբր իմ երախտագիտութեանս ար-
 տայայտութիւն տիկինը եւ օրիորդներն ալ կը հրա-
 շիրեմ մեզի մասնակցելու: Ենթադրուի դէմքերու եւ
 առատագուծ սիրտերու կարողութիւնն եւ աղղեցու-
 թիւնը քիչ հրաշքներ գործած չ'են երկրիս վրայ:

— Գեղեցիկ սեռը միշտ հրաշագործ եղած է, ը-
 սաւ Տօղթէօրր քծնութեամբ:

— Ուրեմն փորձենք եւ մաղթենք որ մեր ձեռ-
 նարկը յաջողութեամբ պտակուի, պատասխանեց ար-
 կինը, բազմելով ճօճաթոռի մը մէջ եւ հրաւիրելով
 իր ընկերուհիները որ իր օրինակին հետեւին:

— Պարոն Յ. Շ. լաւ մ'է՛: շրէ՛ք, գլխուստա-
 բար ձեր սիրոյն համար է որ ես րո՞ լեզուս պիտի
 յոգնեցնեմ եւ աղնուամեծար ունկնդիրներս իրենց

ուշը պիտի հաճին նուիրել, ըսաւ Ալֆրէտ Պ. իբր
 նախարան իր պատմութեան:



« Հայկական կոտորածի տարին Ուրֆա գացեր
 էի գործեր կարգադրելու համար թուրքի մը հետ,
 զոր Ապտուլլահ պիտի անուանեմ, եւ որ՝ երկայն
 ժամանակ ճշգրտան ըլլալէն ետքը, վաճառատան նա-
 մակներուն չ'էր պատասխաներ մի քանի ամբոսներէ
 ի վեր:

« Բազաքին մէջ արդէն ջարդ մը տեղի ունեցած
 էր: Թէ՛ թրքական եւ թէ՛ եւրոպական թերթերը
 խաղաղութեան վերահաստատուած ըլլալը կ'աւետե-
 ին, Ասիէ զատ երկրորդ ջարդի մը հաւանականու-
 թիւնը չ'էր կրնար ընդունուիլ: Պէյրութէն չ'մկնած,
 հիւպատոսներու հետ ալ անակցելով ազատուե-
 ցայ թէ ալ վախնալու տեղի չ'կար:

« Ուստի Ուրֆա հասայ 1895 դեկտեմբեր 8)20
 ուրբաթ իրիկուն, եւ հայտնեակ թաղի մը մօտ խան
 մը իջեւանեցայ: Հետեւեալ օրը Ապտուլլահը տեսայ,
 որ սիրալիր ընդունելութիւն մ'ընելով հանդերձ հաս-
 կըցուց թէ՛ տիրող տաղնապին պատճառաւ՝ իրեն
 խիստ դժուար, գրեթէ անկարելի պիտի ըլլար իր
 մուրհակները յարգել: Մանաւանդ որ քրիստոնեայ-
 ները, որոնք թուրքերուն գրամական օգնութիւն
 երբէք չ'էին զլացած իրենց վաճառականական յա-
 ըարեցութեանց մէջ, հիմայ սարսափահար եւ կոտո-
 րածի վերակուսեմ մը վախնալով, իրենց տուններէն
 դուրս չ'էին ելլեր եւ ամէն գործառնութիւն զաղրե-
 ցուցած էին:

« Մարդը չ'էր ստեր, եւ սառած ալ չ'էր ըլլար ե-
 թէ ըսէր թէ քրիստոնեայնիւրուն մեծամասնութիւնը
 արդէն կողոպտուած եւ մոխրի վրայ նստած էր:
 Իսկ փոքր մաս մը, եթէ կրցած էր բան մ'ազատ-
 անալ, շատ զեւեղած զայն ազատով վայր մը, ուր
 կէ բնակեցաւ: Գուրջ չ'պիտի հանէր մինչեւ

խողաղութիւնը վերջնականապէս չ'վերադառնար:

« Իմ սենեակէս, որ՝ ինչպէս ըսի՝ հայաբնակ թաղի մը կ'ից խանի մը մէջ էր, մեծ դիւրութիւն ունէի դիտելու այն թշուառ ժողովուրդը: Այդ անբարոյները վախէն կ'իսամեռ՝ խիստ ցանցառ եւ գըրեթէ սողոսկելով վողոց կ'ելլէին, այն ալ՝ երբ քաղցն ու ծարաւը զիրենք կը հարկադրէին, եւ ինչինքնին բացառաբար բարեբաղդ կը նկատէին եթէ յաջողէին իրենց տուները վերադառնալ սուանց վիրաւորուած կամ սուանց դանկոծուած ըլլալու: Սակայն տունէն դուրս ելլելու աղետալի հարկը օր ըստ օրէ աւելի ստիպողական կ'ըլլար եւ աւելի կը ծաւալէր: Պահեստի պաշարներն ու կահ կարասիք թալլուած, ոչնչացած էին 16)28 Հոկտեմբերի ղէպքին մէջ: Բողոքաբան Հայեր գրեթէ մերկ էին: Այրեր, կիներ, աղջիկներ եւ մանուկներ ծուէն ծուէն ցնցոտիներով մնացած էին: Դիւրին էր կուսել թէ ինչ որ աւազակներու կողմէն ձգուած էր իբր անաբժէք, այն խեղճ էակներուն կը ծառայէր թէ՛ իրենց մերկութիւնը ծածկելու եւ թէ՛ ղէչ աղէկ պատասպարուելու ցուրտէն, որ անսովոր սաստկութիւն մ'ունէր: Վատուժ էին ամէնքն ալ եւ ոսկրացից, առապանք եւ սարսափ կարծես անջնջելիօրէն նկարուած էին անոնց մեռելատիպ ղէմքերուն վրայ:

« Աւրֆա հասնելու երկրորդ օրը, արշալոյսին, քունէս ընդոստ արթնցայ: Խեղդուած հեծկլուտներ ականջիս զարկած էին: Պատուհանը բացի եւ աչքերուս առջեւ ունեցայ տեսարան մը այնքան տխրաղ-ղեցիկ, այնքան սրտաճմլիկ, որ անոր նմանին չեմ կարծեր որ ամէն ոք իր կեանքին մէջ հանդիպի ղէթ մէկ անգամ: Քուրջի կտորներով սքողուած մանկամարդ կ'իւն մը ծունդերուն վրայ ինկած էր զրան մը սեմին վրայ: Առջեւը, փողոցին մէջ, հողին վրայ երկնցած էին պառաւի մը եւ անտիական մանուկի մը անկենդան մարմինները: Կիւնը՝ իր հեկեկանքները զսպելու անկարող՝ գլուխը քարերուն կը զարնէր եւ մազերը կը փետտէր լիբրուուն իր մօրն ու վերջին զաւակին

դիակներուն վրայ: Ետքը լսեցի որ ցուրախն եւ այլ եւ այլ զրկանքներու զո՞հ դացած էին այն թշուառները: Երկու օրէ ի վեր մեռած էին, բայց կէնը, որուն քով ոչ ոք կ'երթար, ստիպուեցաւ դանոնք տանը մէջ պահել եւ անոնց յատկացնել այն չոր խոտը, որ երեքին ալ իբր անկողին կը ծառայէր երկու ամսէ ի վեր: Արդէն՝ առաջին կտորածը անոր ձեռքէն յափշտակած էր իր հայրը, ամուսինը եւ երկու մանչերը. աղջիկը անյայտացած էր՝ Համիտիներու ձեռքը ինկած ըլլալով: Այն միջոցին, ո՛ւր ես անշոր կարեկցութեամբ կը դիտէի այդ բազմախոց կիւնը, զոր թերեւս կ'արժէ քրիստոնէաբար անուանել «Մայր ցաւոց», փողոցն ամայի էր: Բայց եւ այնպէս չէի համարձակեր փողոցն ելնել սփոփելու համար բազմանդամ ընտանիքի մը իբր ողբերգու ձգուած այդ վշտակոծ խեղճուհին, վասն զի չ'ըրպէս զոյժ տարածայնութիւններ կը պտըտէին քաղաքին մէջ: Մօտալուս յարձակումի մը զրոյցը աննկարագրելի անձկութեամբ մը համակած էր վերապրողները: Վերջապէս կիւնը, ոտնաձայն մը լսելով, իր սիրեցեալներուն քարացած մարմինները երկայն եւ հողերուղիս համբոյրներով ծածկելէն ետքը փութաց ներս քաշուիլ: Հաղիւ տան դուռը դոցուած էր որ սովալուէկ շուներու երամ մը, չեմ դիտեր որ ծակերէն ելած՝ ինկաւ դիտիներուն վրայ: . . . Ձեռքերովս աչքերս զոցեցի ջղաձգաբար Հինգ վայրկեան ետքը դարձեալ նոյնցայ, սչինչ մնացած էր այն երկու մարմիններէն, որոնք մարդկային էակներու պատկանած էին: Միայն քանի մը շուներ իրենց թաթերն ու դունչերը կը լիզէին եւ մի քանիներ ալ ոսկրոտիք կը կրծէին: . . . Յայտնի էր որ կենդանիները սովորած էին այս տեսակ խնջոյքներու:



«Մի եւ նոյն օր, ամենախիստ պատիժներու ըսպառնալիքով, կայսերական կառավարութիւնը, մու-

նետիկներու միջոցաւ, քրիստոնեայններուն կը հրա-
մայէր խանութները բանալ: Եւ մի եւ նոյն ժամա-
նակ, ոստիկաններուն հսկողութեամբ Պալատը կը
ժողովէր Հայերու մնացած մեծերը եւ բերանացի ա-
նոնց կը կրկնէր մի եւ նոյն պատուէրը եւ մի եւ
նոյն սպառնալիքը, յաւելլով սակայն թէ զգուշու-
թիւններու գիմուած է որ եւ է խոտվութեան եւ
խոռնակութեան առաջքն առնելու համար: Աւելի
ըլլալով, անշուշտ Հայերուն վստահութիւնն ներշն-
չելու նպատակաւ, մի քանի թիւրքեր բերել տուաւ
եւ զանոնք խրատեց սիրով ապրիլ իբնց հայրենա-
կիցիներուն հետ: Ասոր վրայ Հայ եւ թիւրք զիբար
ողջագուրեցին: Առաջինները՝ միշտ ապշեցուցիչ կեր-
պով միամիտ՝ փութացին այս բերկատիթ կղելու-
թիւնը հաղորդել իրենց կրօնակիցիներուն: Այն օր
քանի մը խանութներ բացուեցան: Նոյն իսկ գանը-
ւեցան Հայեր, որոնք՝ առանց ստիպուած ըլլալով՝
համարձակեցան փողոց ելլել: Հետեւեալ օրը, երկու-
շաբթի, կառավարութիւնը՝ միշտ խաղաղութիւնը
անվրդով պահելու պատրուակաւ՝ Հայերուն ձեռքէն
առաւ ամէն ինչ որ կրնար իբր զէնք ծառայել, զոր
օրինակ, յօշոց, սեղանի գանակ, եւ այլն: Ընդհերը
կատարելագէտ ապահով չէին, բայց ինչ կրնային
ընել: Ռատիկաները տուներու մէջ կը խուժէին եւ
զատնին կը վերցնէին, եւ իթէ զէնքի վերաբերեալ
բան մը չգտնէին, հինգ ոսկի տուգանք կ'առնէին,
ի՛նչ արամարանութեամբ, երբէք ինչքա չ'հասաւ...
Այս գումարը կամ անոր փոխարմէքը տալու անկա-
րող տանտէրերը բանտ կ'առաջնորդուէին, իսկ այրի
մնացած տանտիրուհիները մօլլաներու եւ իմամներու
տուները կը իրկուէին, հոն փակուելու համար: Բայց
որովհետեւ որ եւ է կերպով վճարելու անկարողները
ստուար թիւ մը կը կաղմէին, կառավարիչը յանկարծ
փոխեց իր հրամանները եւ ո՛չ միայն այլ եւս զա-
նոնք իրենց տուներէն չ'հեռացուց. այլ նաեւ բան-
տարկուած այրերն ու կիներն ալ ազատ արձակեց:



«Այն օրն ալ անցաւ առանց տնտես զէպքի մը,
ի մեծ ուրախութիւն Հայերուն:»
«Երեքշաբթի, բաց խանութներու թիւն աւել-
ցաւ, քիչ շատ առուտուր եղաւ: Ժողովուրդը շունչ
կ'առնէր եւ լաւազոյն օրերու հեռապատկեր մը կը
տեսնէր իր առջեւ: Պարագայ մը որ զիս չափազանց
զարմացուց, այն է թէ՛ թիւրքերը, մանաւանդ ծեր
թիւրքերը ինքնաբերաբար կը փութային իրենց մա-
նրը մուկն պարտքերը վճարել հայերուն:»
«Այն օր Հայ քահանայներուն կարելի եղաւ՝
առանց քարկոծուելու գերեզմանատուն առաջնորդել
չորս մեռեալ, որոնք երեսուն ժամէ ի վեր վար զըր-
ուած էին տուներու մէջ: Նաեւ ես ալ այն օր ժա-
մադրո՞մէ մը ստացայ այն մտնրամասնութիւնները,
զորոնք առի ամբողջ ընտանեաց անդամները կորսն-
ցուցած մանկամարդ կնոջ վրայ: Ժամադործը ըստ
նաեւ որ չկար առն մը, որ անձի կորուստ չ'ունե-
նար: Ամէն ընտանիք սպաննուած կամ անհետացած
մէկ կամ աւելի անդամներու սուղը կը կրէր: Իրենց
հինգ վեց անդամներով բնաջինջ եղած ընտանիքներ
ալ քիչ չէին: Կոտորածէն ետքը, որովհետեւ թիւր-
քերը՝ հետեւելով իրենց կրօնադիրքին պատուէրին՝
նախատելով կը մերժէին դիակները վերցնել, ասոնք
կամ շուններուն կեր եղած էին եւ կամ հրեայներուն
միջոցաւ քաշկուտուելով քաղաքէն դուրս հանուած եւ
փոսի մը մէջ նետուած էին, հոն ալ շնագայլերուն
ճիրաններուն տակ բզկուտուելու համար: Կիներ, բազ-
մաթիւ կոյսեր պղծուեցան, շատերն ալ Համիթի-
ներուն կողմէն առուանդուեցան: (Պէտք է գիտնալ որ
այսպիսի զէպքերու մէջ թիւրքերն ու զօրքը՝ շատ
անգամ՝ Համիթիէյի տարազով ծպտուած են): Մէկ
խօսքով, ժամադործը ինձի պատմեց այսպիսի եղե-
լու թիւններ որոնց խժողութիւնը աներեւակայելի

է և քսամեկութիւնը աննկարագրելի: Գոյքի և զբամբի կորուստը ամէն հաշուէ վեր է:

«Տեսածներէս և լսածներէս թէ և սատարիկ ըզդածուած՝ կը սկսէի յուսալ թէ պահանջիս գէթ մէկ մասը պիտի կրնայի ստանալ և և քաղաքէն մեկնիլ: Անոնք, որոնք խանութնին բացած էին, գո՛հ կ'երեւէին: Գնողները մեծաւ մասամբ քիւրդեր էին, որոնք՝ իբր խաղաղասէր աշխարհաշրջիկներ՝ ժուռ կուզային քաղաքին մէջ, որուն ըստը թաղերը աչքէ կ'անցընէին մեծ խնամքով:

«Մինչ այս մինչ այն, ուրբաթ օրն անցած էր և շաբաթ առտու գրեթէ ըստը քրիստոնեայններ՝ ուլախութեամբ լցած՝ իրենց գործերով կը ըբաղէին: Ուրբաթը սպառնալի երեւցած էր իրենց: Վախցուած էր որ թիւրքերը աւելի կատաղած դուրս չ'ելլեն մըզկիթներէն:

«Ուստի շաբաթ առտու ժամը ըստ եւրոպացոց սասնին մօտ խան վերդարձած էի հռչիւներս կարգապրելու նպատակաւ: Վասն զի Ապուլլահ ինձի կէս մը հասկցուցած էր թէ այն իրիկուն պիտի վըճարէր, թէ և այս բանը անհաւատալի կը թուէր ինձի: Ինչ և էգէ, հազիւ ժամէ մ'ի վեր զբաղած էի, երբ յանկարծ աղիտորմ աղաղակներով և զժոխային ժխտով խառն հրազէններու պայթիւններէ իըլանալով անդէս ցաակեցի և և փողոց սրացայ: Չ'եմ կրնար ըսել թէ ինչ անսակ զգացումի մը կը հնազանդէի, այն միջոցին վախով համակուած էի թէ հետաքրքրութենէ կը մղուէի, չ'եմ գիտեր: Սա ճշմարիտ է որ եթէ խորհելու կարողութիւն ունենայի սենեակս փակուած պիտի մնայի:

«Եսան զբան առջիւ ակնատես եղայ ահագնասարսուռ անսարանի մը, զոր երբէք չպիտի կրնամ մոռնալ: Հայերը, իրենց ետեւն ունենալով գաշոյնով, բիրով, թահնայով զինուած թուրքեր, կը փախչէին ամէն կողմէն, մինչդեռ փողոցներուն ծայրերը զարանացած կատաղի քիւրահր փախստականները կը շանթան սրէին իրենց հրազէններով: Մեծածներ և

վիւտորուածներ կը բղկտուէին, չատերն ալ կրուակի հարուածներուն տակ կը փչէին իրենց վերջին շունչը: Ո՛չ ոք կը խնայուէր: Գաղանացած դահիճները՝ անտիական երախաները կը խլէին իրենց հօր կամ մօր գիրկէն, և՛ անոնց ոտքերէն բռնելով՝ զանոնք ուժգնաբար կը բաղխէին պատերու կամ քարայտակներու, ուր աղեխարչ ճիչերով խիւսի կը վերածուէին մուկերի թիւրք կիներու և մանուկներու ոտքերուն տակ: Ուրիշներ՝ դեռ նոր կարուած և արիւնահոս գլուխներով զարդարուած նիղակներ վեր բռնած կը պտըտէին փողոցէ փողոց սատանայական գոռում գոչումներով: Մի քանիներ ալ մտավճառներուն կարթերէն կախուած և տակաւին հուժկու կեանքով գալարուն մանուկներու միտերը կը յօշոտէին ամենամեծ պաղարիւնութեամբ... Հրացանի գնալիներու կամ գաշոյնի հարուածներու տակ մեռնողներն ամենէն բազումներն էին...»

Սյուլիսի բացատրիկներէն ճգնաժամային վայրկեաններու միջոցին, կսիւի անվարժ ժողովուրդի մը սրտին մէջ, կորով և զորով կարծեմ անդի կուտան խիստ աղէտայի սարսափի և ինքնապահպանութեան բնագոր յանդարձ այնքան կը նուստտանա, որ բանաւոր մարդը անբան էակներուն յեանագոյնը: Գրեթէ իբ մը կ'ըլլայ: Ուրիշ խօսքերով չեմ կրնար բացատրել գաղանիքը այն վիճակին, որուն մէջ կը գտնուէր Ուրֆայի Հայութիւնը այդ շարաշուք ժամերուն մէջ: Կոտորածին միջոցին, տեսայ ծնողներ, որոնք մտնալով իրենց ամէն պարտականութիւնները, միմիայն իրենց կեանքը ազատեալու կը ճգնէին փոխուստով կամ ուրիշ միջոցներով: Տեսայ ընտանիքի հայեր, ամուսիններ, որոնք իրենց կիներուն, անտիական զաւակներուն ետեւը կ'ապաստանէին: Հուժկու երիտասարդներ, յաղթանգամ կտրիճներ իրենց դահիճներուն, նոյն խակ թիւրք և քիւրս մանուկներուն առջիւ ծնրադրած իրենց խնայուելը կը պաղատէին բազկատարած, մինչդեռ կարող էին բառնցքի հարուածով զանոնք զեալին

տապալելու և անոնց զէնքերուն տիրանալ: Բայց տեսայ նաև ծաղկահասակ օրիորդ մը՝ անվեհերութեան, պարտաճանաչութեան սքանչելի ախպար մը, որ անվիճելի և անմոռանալի փաստերով ցուցուց թէ այն ցեղը, որ իրեն ծնունդ տուաւ, առակ է՝ մի քիչ կամեցողութեամբ՝ առիւծանալ և լեղապատառ ընել իր թշնամիները: Այս մատղաշ հայուհին, զբան մը առջև խորխտաբար անկուած, զայն կը պաշտպանէր երկայնաձող ստապարի մը միջոցաւ: Քսանէ աւելի թիւրքեր և քիւրտեր կը կոտէին այդ հերոսուհոյն զէմ իրենց սուրբերով, զաշոյններով, զաննաշիններով և բիրերով: Հայուհին հիանալի զիւրաշարժութեամբ, անդիմադրելի և յեղակարծ յարձակումներով, թշնամիներէ մէկ երկուքը կը տապալէր և կայծակի աբողովեամբ՝ իստապարը կը զարձնէր միւսներու գլխուս: Երբ ինք կէս քայլ զէս յառաջ հակէր, անզգալիօրէն հեռանալով տան պատէն՝ իր միակ յետնապոս պաշտպանը, մարգասպանները տաք քայլ ևս կ'ընկրկէին: Ինչ օգուտ որ նա միտակ էր, մինչգեռ ինկած մէկ ապիրտաին կը յաջորդէին չորս ապիրտաներ: Այդ աննման զիւրաշարժին շատերը զիտապատ ըրած էր և՛ թէպէտ անշուշտ յոգնած՝ զերբնական ուժով մը կը շարունակէր մահ: Եւ իր բոլորութեամբ, երբ հրացանի գնտակ մը՝ չեմ գիտեր ո՛ր կողմէն սուրալով՝ զայն ճակատէն զարկաւ և զետին փոկց: Երկու վայրկեան չ'անցած կտոր կտոր եղած էր այն զարմանահրաշ հայուհին պաշտելի մարմինը... Թերեւս կը սխալիմ, բայց իմ տեսածներուս վրայ յենլով կրնամ յայտարարել թէ քսան հատ ճշմարտագէտ քաջասիրտ և անձնուէր հայեր կարող պիտի ըլլային այն թաղին հարիւրաւոր մարգակոտորները ծակէ ծակ հալածել: Կ'ըսուի թէ ուրիշ թաղերուն հայերը այս ատախճան չ'են համակերպած և այնպիսի ընդունելութիւն մ'ըրած են մարդասպաններու խուժանին, որ՝ եթէ կանոնաւոր զօրքը այս վերջիններուն օգնութեան չ'իութար, առաջինները գնտակահարելով, Ռեֆայի խնդիրը Հայերու

համար այրագէտ փառաւոր վախճան մը պիտի ունենար: Ինչ որ ալ ըլլայ, սա ճշմարիտ է որ այն Հայուհին իմ դաղափարներս յեղաշրջեց: Այսօր համուռած եմ որ Հոյերը, փոխանակ եւրոպական այս կտմայն տէրութեան ոտքը լգելու ստակարար՝ իրենց յոյսը շատ շուտ կ'իրականացնեն եթէ ինքնապահպանութեան անդ ինքնապաշտպանութեան գիւղը նեաուն խոհեմութեամբ և լրջօրէն...

— Ինչ տարբերութիւն կայ ինքնապահպանումի և ինքնապաշտպանումի մէջ, հարցոյց օրիորդներէն մին:

— Կարծեմ, պատասխանեց բժիշկը Պ. Ալֆրէտ իր պատմութեան մէջ զօրձնականագէտ ցեղ թէ ինչ կը հասկնայ այդ երկու բառերով: Զօր օրինակ, անոնք, որոնք վատարար ինքզինքնին կը յանձնէին իրենց պահանջներուն ձեռքը, այն յայտով թէ իրենց կիանքը պիտի ազատեն, այսինքն՝ ինքնապահպանութեան խեղաթիւրուած բնազգով, ո՛չ միայն իրենք կը կորսուէին անլրջոյ այլ նաև իրենց պարագաներն ալ կը կորսնցնէին: Մինչդեռ մնծողի Հայուհին, որ առ երևոյթս ինքզինքը կը պաշտպանէր, կը պաշտպանէր նաև ուրիշները՝ իր առջև կաշկանդուած պահելով մէկէ աւելի թշնամիներ: Եոյն իսկ պատերազմի զաշտերուն վրայ խիղախ զօրքերու գունդ մը կարող է՝ իր գիմադրութեամբ՝ թշնամիին բանակները կասեցնել և՛ այս գօրծին բնական հետեւանքով՝ իր հայրենակիցները աւելի արժանայարգ ներկայացնել: Արիւհի հոտէն գինովն սլով զաղանացած կոտորիչներուն կատաղութիւնը կը ստատկանայ վատաւրաւութեանց առջև, քաջարար գիմադրութիւնն է այն միակ զէնքը որ կարող է զայն խորտակել: Մի քիչ երկար բացատրութենէս կը հետեցնեմ որ ազգի մը անհատները միմիայն ինքնապաշտպանութեամբ արդ չ'աղք պաշտպանած, պահպանած և աղատած կ'ըլլան:

Այս թուեցիներուն գիմադրութիւնը, ըստ

6133-70

Ալֆրէտ Պ. փառահեղ փաստ մ'է՛ ինքնապաշտպանութեան անգնահատելի արժանիքը եւ փրկարար ընոյթը երեւան հանող: Եթէ այդ խրոխտ լեռնորդ ինքերն ալ իրենց միւս հայրենակիցներուն պէս համակերպէին արիւնխում կառավարութեան մը դժոխային տրամադրութիւններուն, բնաւ տարակոյս չկայ որ իրենց պատմական գիւղաքաղաքը անթաղ դիակներու անհուն գերեզմաննոց մը պիտի ըլլար, որուն հողին վրայ անսիրտ չէրքէզը, վաչկատուն թիւրքմէնը եւ աւաղակ քիւրքը այդ կոտորածին յիշատակը պիտի տնէին պարբերաբար:

— Լսածներէս կ'եղբակացնեմ որ համերաշխութեան ողին ընդհանրացած չէ այդ ազգին մէջ, ըստ տիկիւնը: Այն պարագային, յիմարութիւն է աղատադրութեան պէս մահու եւ կենաց գործի մը ձեռնարկել: Մահու՝ անմիաբանութեամբ, կենաց՝ համերաշխութեամբ եւ սիրով: Միթէ Հայերը գաղափարած աւալ գործիչներ եւ հրահանգիչներ չ'ունեցան:

— Լսած իս համեմատ ժողովուրդը լուսաւորելու ծանրակշիռ պաշտօնը ինքնաբերաբար ստանձնած են երկու ընկերութիւններ կամ յեղափոխակ ղուսակցութիւններ, պատասխանեց Ալֆրէտ Պ., ցաւալին այն է որ՝ երկպառակութեան, անվստահութեան, հակառակութեան առաջին օրինակը այդ կազմակերպութիւնները տուին ազգին, որուն սէր եւ միութիւն քարոզելու պաշտօնով հրապարակ նետուած էին:

— Յաւալի՛, ցաւալի՛, արգարեւ հառաչեց տիկիւնը:

— Համերաշխութեան, այսինքն՝ անհատ մը, իր անձնական օգուած՝ իր կողմէն իր ընկերին տրուած օգնութեան մէջ կայացնելու ոգին անձանօթ մնացած է այն ազգին, ըսաւ բժիշկը: Հայ բարեկամ մ'ունէի որ՝ իրենց ազգային պատմութեան լաւ տեղեակ՝ կը հաւատայ որ աւատականութեան ժամանակէն սկըսեալ նախարարները, ընդարձակ գաւառներու գրկութէ ինքնազուխ իշխանները, աւագանին համաձայ-

նութեամբ երբէք գործի մը ձեռնարկած չ'են, Հայաստանը թաղաւորութիւն ունեցած ժամանակ եւ հարստութեանց անկումէն ետքը, իշխանները երբէք միացած չ'են գտնը կամ հայրենիքը պաշտպանելու համար: Անոնք լաւագոյն համարած են ամեն մէկը իր ամբողջ քաջութիւն եւ մի միայն իր իշխանութեան երկիրը պահպանել թշնամիէն, որ իր առջև միացած, ստուար խումբեր չգտնելով, խիստ գիւրութեամբ մէկիկ մէկիկ ոչնչացուց այդ իշխանութիւնները:

— Վերագառնալով Հայերուն այսօրուան յեղափոխական կազմակերպութեանց, ըսաւ Ալֆրէտ Պ., անկարելի է ուրանալ որ կուսակցութիւնները հզօր, բարեկարգ ժողովուրդի մը համար եւ խաղաղութեան ժամանակ անհրաժեշտ են զեղծումնոր ջնջելու, ճըշմարտութիւններ երեւան հանելու, մէկ խօսքով ազգին մտաւորապէս եւ բարոյապէս անդադար բարդաւածութիւն համար: Բայց ներկայիս մէջ Հայերուն կացութիւնը խիստ տարբեր է, եւ անոնց յեղափոխական մարմիններուն իրերամարտ գիրքը այն աստիճան անհասկնալի է ինձի համար, որ երբեմն կասկածելով՝ անոնց անկեղծութեան վրայ ինքն իրենս կը հարցնեմ «Ի՞նչ է այդ անձերուն բուն նպատակը, ա՞զգը փրկել թէ անձնական գիրք մը ստեղծել»: Իմ կարծիքով ոչ միայն թշնամին կ'օգտուի անոնց այդ երկպառակութենէն, այլ ազգն ալ կը սուս է բարոյապէս: Դարերով սարկութեան լուծին տակ հի՛ ծած ժողովուրդ մը կէս քուն կէս արթուն վիճակի մէջ պահել ազգաշի վախճան միայն կրնայ ունենալ, մարդկային ընկերութեան վրայ կազմելու հազիւ սկսած զաղափարը յոռեփոխուելով:

— Բայց, ըստ տիկիւնը, կարծեմ Հայերուն տըղիտութիւնը եւ կոտի անվարժ ըլլալը իրենց այնքան չ'ընտանց, որքան քաղաքակիրթ սղղերուն անտօրբերութիւնը:

— Ձեզի բոլորովին համամիտ չեմ կրնար ըլլալ, Տիկիւն, պատասխանեց Ալֆրէտ Պ., եթէ ազգեր

բառով կառավարութիւններ ըսել չէք ուղերս թէ՛ իմ համոզումովս՝ ի՛նչ զանազանութիւն կը դնեմ ազգի եւ կառավարութեան միջեւ, ատիկա բացատրել մի քիչ երկայն կ'ըլլայ, ինչ որ ձանձրացուցիչ հանգամանք մը կ'ունենայ կարճ պատմութիւններու մէջ:

— Այս ամէնը լաւ, ընդմիջեց օրիորդներէն մին, բայց կը վախենամ որ Պ. Ալֆրէտ իր պատմութեան թելը չկորսնցնէ: Ուստի — շարայարեց ամենուս վրայ աչքերը պտացընելով — ատկնոջ, քրոջս եւ պարօններուն թոյլատուութեամբ, Պ. Ալֆրէտը վերապիտի իր ճամբուն մէջ կը դնեմ եւ իր յիշողութեան օգնելու համար կը խնդրեմ նախ ըսել թէ՛ զնտակի մը տակ քաջաբար նահատակուող Հայ օրիորդին ինքնապաշտպանութիւնը գէթ արգիւնք մ'ունեցա՞ւ:

— Երեք կեանք ազատեց, օրիորդ, պատասխանեց Ալֆրէտ Պ. իր հիւանդ հայրը, աջազուրկ մեծ մայրը եւ իր... նշանածը:

— Իր նշանածը... այս հարցումը որոտաց ամեն մէկ բերանէն:

— Իր նշանածը՝ որ տան թոնիրին մէջ կձկուած էր դողահար, մինչդեռ հիւանդ հայրը եւ աջազուրկ մեծ մայրը դրան բանալին կը փնտոէին իրենց քաջարի զուակին օգնութեան վազելու համար:

— Ետքը՛:

— Իոտը չկրցան բանալի վասն զի բանալին ալ թոնիրի մէջ էր՝ նշանածին քով, որ միջոցներու մէջ չէր թերացած իր մորթը կանդուն պահելու համար...:

Ունկնդիրները իրարու երես նայեցան մեծ դարձացումով:

— Այս բանը ի՛նչպէս վերջացաւ, հարցուց օրիորդներէն մին:

— Մարդակոտորները, հերոսահոյն մահէն ետքը, այդ տունը ձգեցին եւ իրենց կտաղութիւնը ուրիշ կողմ դարձուցին: Բայց Հայուհիին հայրը աջազուրկ եւ մեծ մայրը նոյն օրը մեռան՝ սրտի կտկիծէն, իսկ նշանածը...

— Իսկ նշանածը... հարցուցաւ մէկ բերան:

— Կ'ըսուի թէ յաջողեցաւ անցնիլ արտասանման, ո՛ւր ինքզինք ճանչցուց իբրեւ յեղափոխութեան անզուգական մի հերոս, եւ այնպէս ալ կը պաշտուի կարգ մը ինքնակոչ յեղափոխականներու կողմէն, որոնք վարժուած են թմբուկին ձայնը հետուէն լսելու...:

Ճնշիչ լուծիւն մը արեց ներկաներուն վրայ Ալֆրէտ Պ. շարունակեց:

— Այս աննկարողը ինչ ու զողի առջեւ ինքզինքս այն աստիճան կորսնցուցած էի, այնքան քարացած էի որ չեմ կրնար ըսել թէ ո՛րչոյն ժամանակ տեսեց այս անուր նախճիրը, ո՛րքան ժամանակ ես հոն՝ խանին դրան առջեւ կեցայ, ի՛նչպէս խնայուեցայ, ի՛նչպէս չմտաուեցայ այն դիւահարներէն, որոնք կը վխտային իմ բոլորախոր:

«Յուժանը ցրուելու սկսած էր, մանկակոտորները կը հեռանային առ ի չորսէ նոր դռներու, բայց հրացանաձգութիւնը եւ կոտորածը կը շարունակէր քաղաքին ուրիշ կողմերը, ո՛ւր հայեր ապաստանած էին:

«Յանկարձ մտղերու բռնուիլը զգալով, զուրիս դարձուցի եւ ճգնաժամի ճիչ մ'արձակեցի: Ձեռքն ինկած էի չորս յելուզակներու, որոնք անշուշտ զիս ալ բաղդակից պիտի ընէին այնքան անմեղներուն, երբ հինգերորդ մը զօջեց հետուէն:

« — Հիւպատոս մ'է, մի՛ դպչիք, եթէ ոչ լսերերնիդ անիծուած է:

«Այսպէս խօսելով հանդերձ՝ կը ցուցնէր՝ անոնց փեղոյթս, որ՝ հրաշալի դիպուածով մը՝ զլխէս չէր ինկած:

«Չիս անմիջապէս ձգեցին:

«Ապաուլլա՛ — որովհետեւ այն էր իմ ազատիչս — ձեռքս բռնեց, եւ արեան զեալ մը մէջ եւ՝ անհամար մեռեալներու եւ հողմվարքներու մէջէն անցընելով՝ զիս իր տունը տարաւ:

— Այս սենեակին մէջ կեցիր, եւ մինչեւ իմ վերադարձս ասկէ դուրս մի՛ ելլեր, ըսաւ :

«Ձգայազիրիկ դեռին փռուեցայ :

«Երբ աչքերս բացի, կանթեղի մը լոյսով տեսայ Ապտուլլանը որ միայնակ կ'ընթերէր ճօխ սեղանի մ'առջեւ : Իմ ըրած շարժումէս ինծի նայեցաւ եւ ըսաւ .

«— Քնացար եւ լաւ ըրիր, որովհետեւ պէտք է որ արշալոյսին քաղաքէն դուրս ելլես : Արդէ՛ն քեզի համար ձի մը վարձած եւ արապի տարազ մ'ալ պտարտած եմ : Այսօր կրցայ քեզ ազատել, բայց վաղուան համար չեմ կրնար երաշխաւորել : Կառավարութիւնը գիտէ որ դուն ո՛չ հիւպատոս, ո՛չ ալ օտար հոյատակ ես . քու միակ առաւելութիւնդ այն է որ դատապարտուած ազգին չ'ես պատկանիր : Առայժմ, ե՛րբ ո՛ր եւ կե՛ր :

«Սեղանին մօտեցայ դողահար մարմնով . բայց կրնաք դուշակել որ անկարելի եղաւ պատառ մը կուլ տալ : Իմ միակ մտադրադումս էր հնազանդիլ իմ պարտաւորութիւնս, որ իր ձեռքերուն մէջ կը բռնէր իմ կեանքս :

«Կերակուրէն ետքը Ապտուլլան դուրս ելլելով քիչ յետոյ եկաւ եւ՝ այլ եւ այլ գրամներով՝ վճարեց իր սլաքքը : Որովհետեւ գիտէի որ օր մ'առաջ չ'ունէր այդ գումարը, այն օրը վճարելու համար ինծի ըրած խոստումը յիշեցի եւ այդ գրամին աղբիւրը իսկոյն կռահեցի : Դա պարզապէս պտուղն էր այն թալուածի որ կոտորածին վերջաբանը եղած էր : Սաստիկ դայքայ, բայց իմ զգացումներս յայտնի չ'ընելու համար, ճամբան կողակտուելու վախը պարտուակելով, ըսաւ կարելիօքն անտորքեր գէմքով մը անոր առաջարկեցի ուրիշ ասիլի մը յետաձգել այդ պարտքին վճարումը : Կարձեմ թէ Ապտուլլան հասկցաւ իմ միտքս, վասն զի ժպտեցաւ եւ ըսաւ .

«— Դուն գիտեա՛մ բայց գիտցիր նաեւ որ մենք մեր ճշմարիտ հաւատացեալի պարտականութիւնը անթերի կատարեցինք՝ Հայերուն վճարելով մեր գր-

բամական բոլոր պտորքը . մեղի ի՞նչ փոյթ, եթէ իրենք չկրցան պահպանել իրենց ստացուածքը :

«Յետոյ բարի գիշեր մաղթելէն ետքը զիս մինակ թողուց :

«Ձէի կրնար ո՛չ քնանալ եւ ո՛չ տեղ մը կենալ : քստմնելի ցորեկը աչքիս առջեւն էր :

«Չ'եմ դիտեր քանի ժամ ետքը հրազէնի պայթիւններ լսեցի տան մօտերը :

«Տերեւի պէս կը սարսուայի, եւ՝ միանգամայն՝ այդ հրացանածգութեան պատճառը չ'էի կրնար ըմբռնել վասն զի զուտ թրքարնակ թաղի մը մէջ կը գտնուէի :

«Քիչ յետոյ Ապտուլլան քովս եկաւ եւ զիս հանդարտեցնելու համար ըսաւ .

«— Սպաննուողները վատողի չորս թիւքեր են, որոնք քանի մը «կեալուր» փախցուցած են : Տե՛ս ինքզինքս ի՞նչ վտանգի ենթարկեցի ձեզ ազատելու համար : Այն չորս թիւքերուն դիակները Հայոց թաղը պիտի տարուին հիմայ, ցուցնելու համար թէ Հայերու կողմէն սպաննուեցան :

«Վրաս հոգի չ'էր մնացած, եւ աշխարհիս վրայ ուրիշ բան չ'էի մաղթեր, բայց միայն անմիջապէս հեռանալ այդ անիծեալ քաղաքէն :



«Յանկարծ ողբ ու կոծ մը վրթաւ տան մէջ, ես՝ սոսկումով համակուած՝ վայրկենական հազար ու մէկ ենթադրութիւններու մէջ կը ծփայի, երբ սենեակիս դուռը անդիմադրելի ուժէ մը մղուած բացուեցաւ . եւ ներս խուժեց արտասուաթոր, հերարձակ ու բոկոտաւն կիին մը, որուն ետեւէն կը վազէր Ապտուլլան՝ զայրազին զոչլոյով :

«— Ի՞նչ կ'ընես, Յամբմա՛, ապիրտաւ կիւն, երեսդ բաց օտարականի մ'առջեւ ելլել . . .

«— Է՛հ, թող զիս, պոռաց կիւնը, գաւակս մեռ-

նելու վրայ է, եւ դուն նամենրաւի խօսք կ'ընես :

«Միեւնոյն ժամանակ կինը առջեւ ծունդ չքած, մի քանի ամսուան երսխայ մը կ'երկարէր ինծի, աղերսելով :

«— Էֆէնաի, դիմա՛, Օսմանս ազատէ՛ :

«Շուարած եւ սարսափած էի, չգիտնալով թէ ո՛վ էր այն կինը եւ ի՛նչ կ'ուզէր, թէ ո՛ր աստիճան յանցապարտ պիտի դատուէի ակամայ անսնելու համար զէմքը թրքուհւոյ մը, որ չէր քողարկուած, որ ինքզինը կ'կնթարկէր իմ աչքերուս: Այս յանդգնութիւնս անմիջապէս իմ կեանքովս պիտի տուժէի թեւեւ, մանաւանդ այնպիսի ժամանակ մը եւ այնպիսի քաղաքի մը մէջ ուր ցեցի մը, անարդ ճճիի մը շունչը աւելի կը յարդուէր քան կրօնակիցներու կեանքը :

«Կ'երեւայ թէ զէմքս արտակարգ բան մը կ'արտայայտէր, վասն զի յանկարծ Ապտուլլան զաւաթ մը ջուր ներկայեց ինծի բնելով :

«— Մի՛ վախնար, ա՛ռ սա ջուրը խմէ՛ս: Յսթմա իմ կինս է եւ քու քոյրդ :

Ա՛հ այն աճուրի ցորեկը, ա՛հ այն սարսափելի դիչերը: Այն յաւէտ անմոռանալի քսանըջոյս ժամերուն մէջ այնքան տարբեր զգացումներու, սոսկումններու, սրտաարփներու մէջ ապալակեցայ որ կը դարմանամ թէ ի՛նչպէս խելքս չկորսնցուցի եւ կամ ողջ մնացի :

«Սակայն կինը չէր զաղբեր ինծի կարկանդէ եւրեխան, որուն նիհար փոքրիկ զէմքին վրայ արդէն մանուան դալուկը նկարուած էր :

«— Էֆէնաի, Էֆէնաի, կը հեծկլտար խեղճ մայրը, զաւակս ազատէ՛, ազատէ՛ Օսմանս: Ոտքդ պագնեմ, հօրդ մօրդ սիրոյն համար ազատէ՛, զա՛ւակս ազատէ :

«— Քո՛յրս, թոթովեցի, ես բժիշկ չ'եմ :

«— Ա՛հ, դուն բժիշկ չ'ես, զոչեց մահամերձին մալոռ մէկ սատուժով սաքի ելնելով :

«Յետոյ տառապողին, աղէկէզ չեշտով մը շարայրեց :

«— Ա՛հ, Օսմանս պիտի մեռնի: Պատուելի Ապուհայաթ եթէ մեռած չ'ըլլար դայն պիտի ազատէր, ինչպէս ազատեց իմ միւս վեց զաւակներս : Բայց Պատուելի Ապուհայաթ երէկ սղաննուեցաւ: Քանհայ ալ չ'մնաց զուկիս գլխուն վրայ կարգալու համար :

«— Ստուած ողորմի հոգւոյն, մրմտաց Ապտուլլան :

«— Ա՛խ, Օսմանս, ճաղուկս :

«Եւ Յաթմա իր կուրծքին վրայ կը սեղմէր, իր արցունքովը կ'ողողէր, իր համրոյրներովը կ'ուզէր վերակենդանացնել մանուկը, որուն մարմնոյն ծայրերը սասելու սկսած էին :

«— Պիտի մեռնի, դաւակս պիտի մեռնի, զոչեց զարձեւալ կինը :

«— Ստուած ինչպէս կ'ուզէ անանկ կ'ըլլայ, ըսաւ խորունկ ձայն մը ետեւս :

«Յանկարծ դուրս գարձուցի զանհոգած :

«Մտողը պատու մ'էր տարիքը կորսնցուցած, երկու անթացու պերու վրայ յենած, զողորջազուխ, մարմինը կաշիացած :

«— Մայրս է, ըսաւ Ապտուլլան եւ փութաց յարգալից՝ պատուին ձեռքերը համրուելու :

«Բայց սա՛ խոժոտագէմ՝ ես հրեց մարդը :

«— Հեո՛ւ, հեո՛ւ, զոչեց զերեզմանային ձայնով մը, հեո՛ւ, մարդասպան, հեո՛ւ, սճրաղործ :

«— Մայր, մրմտաց Ապտուլլան հեղօրէն, հօրս զերեզմանին վրայ կ'երգնում որ ձեռքս արիւնտ չէ :

«— Եւ միթէ այդ կը բաէ՛, պատասխանեց պոռու՛ր՝ զայրադին, ո՛ւր են այն աղջիկները, այն կիները, այն մանուկները, այն ձերերը, այն հիւանդները, այն երթասարգները զորոնք իրր ճշմարտ հաւատացեալ, ազատելու էիր, հոս բերելու էլ առնդ՝ հօրդ առնը՝ յայտնի ապաստան մ'ըլլալէն հալածուածներու համար: Այսպէս պիտի

քու հայրդ: Ո՛ւր են այն վէրքերը զորոնք սասցար
անմեղ մը խլելու համար անգութ ծանօթի մը, բա-
րեկամի մը, ազդականի մը զինուած ձեռքերէն:

Ա՛հ, մեր օրերը քաղաքացիութիւնը իր պարտակա-
նութիւնը եւ իր իրաւունքն ունէր, գրացիութիւնը
իր պարտականութիւնը եւ իր իրաւունքն ունէր, ազն
ու հացը իրենց նուիրական պարտականութիւնը եւ
իրենց նուիրական իրաւունքն ունէին: Աստուած
ուզեց ինծի ալ ցուցնել ձեր օրերուն պէս անխճեալ
օրեր: Ես շուտ կը մեռնիմ, դուք ողջ կը մնաք, բայց
գիտցէ՛ք որ միտիւլմանութիւնը կորսնցնելով իր
արդարասիրութիւնը՝ կորսնցուց նաեւ իր փսփփոքը:
Եւ նոյն իսկ իրեն կորուստն ալ մօտ է:

Պատուը կը փրփրար:

— Եւ ինչո՛ւ այս ամէնը, շարունակեց աւելի
բարձր ձայնով, վասն զի թողաւօրը հրամայած է:
Բայց տեսա՞՞մ էք այն թողաւօրը, ո՛չ, միայն գիտէք
որ գոյութիւն ունի: Ինչո՛ւ երկու օրուան թագաւո-
րին խօսքը կը կատարէք եւ անակիզը ու անվերջ
Աստուծոյ պատուէրներուն ականջ չէք կախեր: Յան-
ցաւորը թող պատմուի, անոր ըսելիք չունիմ, բայց
անմեղներէն ի՛նչ կ'ուզէք: Մանուկներու, կիներու,
ձերերու, հաղարարու անդիտակներու յանցանքն ի՛նչ
է: Իմամբ — յենլով դուրանը չէրիֆին վրայ՝ ընդ-
հանուր ջարդ կը քարոզէ եզեր: Թող երթայ, քարո-
զէ, դուք կարգացած էք այդ գիրքը, ո՛չ, ուրեմն
ինչո՛ւ չէք խորհիր որ իմամբ կրնայ ձեզ խտրել,
կամ սխալիլ: Ի՛նչ անտակ ապիկար մարդեր էք դուք
որ մի քանի մարդոց խօսքերուն կուրօշն կը հեռե-
ւիք՝ դուք ձեր առնը քոնդելու եւ ձեր վրայ հերզէն
անէժքներ տեղացնելու համար:

«Պատուը լսեց:

— Բայց, մայր, ըսաւ Ապտուլլահ՝ ակնածու:

Նուարդ եւ Գէորդ...

Նուարդ եւ Գէորդ ընդմիջեց պատար, սո-

վալըլուկ գայլերուն առջեւէն յուսահատօրէն փախող
դառնուկներու նման ինքնաբերաբար հոս ինկան՝
մին միւսը գրկած, առանց զիանալու թէ ո՛ր կ'եր-
թային: Այո՛, Նուարդ եւ Գէորդ հոս են բայց արցեօք
քաջութիւնը եւ վեհանձնութիւնը պիտի ունենան
զանոնք պաշտպանելու, եթէ անխիղճ, անհաւատ
միտիւլմաններ զանոնք ջարդել ուզեն:

«Եւ յետոյ զէպի գուտը զաւնալով, պատուը
չարայարեց:

«— Ներս եկէ՛ք, դուռկներս, մի՛ վախճաք,
ցորչախ այս դողոջուն ձեռքերը եւ այս տատնա-
ղուկ բերանը պատանքի մէջ փաթթուած չ'են, ձեր
մաղկրուն զգջող չըլար:

«Պահ մը ինքզինքս մտոցայ եւ հետաքրքրու-
թեամբ գուտը նայեցայ:

«Գրեթէ տասնուվեց տարեկան զեղեցիկ աղ-
ջիկ մը վեց-եօթը տարեկան մանչի մը ձեռքէն բըռ-
նած ներս մտաւ: Աղջկան խօրտեսջ եւ անխնամ
մաղկրը մէջքէն վար կը ծածոնէին, սեւ եւ աղուհա-
յկաց աչքերը լալէն տանցած էին, բարձր հասակը
կորացած էր: Մանչը՝ Գէորդ՝ սիրուն տշէկ մ'էր վա-
խէն խոշորցած աչքերով: Երգուքն ալ պատաստուն
ցնցոսիներով ծածկուած էին:

«— Եկէ՛ք, դուռկներս, ձեր երկրորդ մօրը զեր-
կը ինկէ՛ք, ըսաւ պտտուր անթացուպերը ձգելով
եւ թեւերը բանալով: Մի՛ վախճաք, թէեւ ձեր եմ,
բայց ձեզ պաշտպանելու համար բուսական մայրական
գորով կը զգամ իմ պատացած սրտիս մէջ: Ո՛վ որ
ալ ըլլան ձեր հայրն ու մայրը, Աստուծոյ օրհնու-
թիւնը թո՛ղ իրենց վրայ ըլլայ, որ իմ հանգուցեալ
ամուսնոյս հաճելի գործ մ'ընելու տախիը հայրթայ-
թեցին ինծի այս զմտխային օրերուն մէջ:

«Արցեօք կը դուշակէ՞ք թէ սոյն միջոցին ի՛նչ
կ'անցնէր իմ մօքիս մէջ: Առանց պատուին բարե-
սրբութիւնը եւ անկեղծութիւնը կասկածի տակ զը-
նելու, կը խորհէի որ այս երկու որրերն ալ շտա

ժամեր չանցած իբրևնց աղղակիցներուն բաղդին պի-
տի մասնակիցէին : Ապտուլլան անոնց համար ալ
մահառիթ վտանգի մը պիտի կնթարկէ՞ր ինքզինքը :

« Հիւանդ մահուկը ձգտաց կտուէ կտու, ինչ
որ բարի նշան մը չէր իր վիճակին մէջ : Բայց ման-
կան մայրը յոյս մ'ունեցու :

« — Նուարդ եւ զուն Գէորգ, ըսաւ որբերուն,
զուք հազիւ ներս եկաք, ահա պիտի կին ձայնը լըս-
ուեցաւ : Կը խնդրեմ աղօթեցէք որ Աստուած կտտար-
եալ առողջութիւն շնորհէ զաւակիս :

« Օրիորդն ու աղեկը կը կենային վարանոս :

« — Չաղակներս, ըսաւ պառաւը, մի' վախճար,
ձեր լեզուով եւ ձեր կերպերով աղօթեցէ՛ք : Թերեւս
Աստուած ձեր անմեղ ձայնին կը լսէ :

Որբերը խաչակնքելէ ետքը ծնրադերու վրայ
էին, երբ թիւրք աղայ մը ներս վաղեց եւ գոչեց .

« — Տաթմա աղլա, մայրս խրկեց ասիկա, կ'ըսէ
որ կիթէ խաչնս եւ ջուրը Օսմանին խմցնես հիւան-
դութիւնը անմիջապէս կ'անցնի :

« — Տար նայիմ, ինչ է անիկա, ըսաւ պառաւը :

« Տղան ետքիւր կտուէ ծրարիկ մը անոր ձեռքին
մէջ գրաւ եւ ըսաւ .

« — Մօրն արգանդէն խլուած կեալուրի մը սիր-
տըն է :

« Գրեթէ նոյն մանրերկրորդին Ապտուլլանին
կինը կը պոտար :

« — Ա՛խ, Օսմանս մեռաւ :

« Եւ մինչդեռ պառաւը՝ բերողին երեսն ի վեր կը
նեաէր ծրարիկը անյօր անէծքներու ակզտարափով
մը : մինչդեռ Նուարդ իր կորայրը թեւերուն մէջ ա-
ռած՝ զգայապիկ կը փութեր, մինչդեռ որդեկորոյս
մայրը իր զուկին գիակը կուրծքին վրայ կը սեղ-
մէր, Ապտուլլան թեւէս քոչեց եւ զիս սննեակէն
զուրս հանել ու գեց :

— Օ՛ն, մեկնի՛նք, ըսաւ, կորսնցնելու ժամանակ
չ'ունիս :

— Մարդը ի՞նչառնք ունէր : Մէն մի վայրկեան

կրնար մահառիթ ըլլալ ինծի համար : Ես ալ կ'ուզէի
անմիջապէս հեռանալ այդ վայոց ձորէն, որ՝ միեւ-
նոյն ժամանակ՝ հրաբլխային երկունքներու մէջ կը
աքարս : Կէս ժամ առաջ պիտի փախչէի առանց ետե-
ւըս նայելու : Բայց Հիմայ, Նուարդ եւ Գէորգ, այդ
երկու անոք որբերը, որոնք անվրէպ դատուած մահէ
մը հրաշալիքէն ազատելէն ետքը իբրեւ զոյգ մը
տատրակ ինկած էին անզոյներու երամի մը մէջ, իմ
ոտքերս կը կաշկանդէին : Իբրա, իբրևնց բարեկամ մը
կը ներկայանար հոն յանձին թրքուհւոյ մը, բայց
այդ կինը մինչև ո՞ր աստիճան պիտի պաշտպանէր
զիրենք, եւ միթէ կարող պիտի ըլլա՞ր զանոնք
պաշտպանելու, ինք որ հաշմանգամ մ'էր, գրեթէ շար-
մելու անկարող : Ուստի կ'ուզէի զանոնք ալ հետս
տանիլ, եւ աչքերս չէի կրնար հեռացնել անոնց զգա-
յազիրիկ մարմինէն :

Կարծեմ պատուը կ'աւանց մտքիս տաղնապը :

« — Բրիտանաց, ըսաւ, զուն ուշանալովդ քու
կեանքդ կը վտանգես առանց որ եւէ մէկուն օգտակար
ըլլալու : Նուարդ եւ Գէորգ քեզի հետ չեն կրնար
մեկնիլ, այս միջոցին զանոնք անէն դուրս հա-
նել, անոնց զուխները սուրին յանձնել է : Դուն զը-
նա՝ եւ վտան հղիք որ անոնց ամենափոքր վնաս մը
չ'պիտի հասնի, այնքան ատեն որ Աստուած իմ վրաս
չունչ պիտի ձգէ : Անոնք իմ զաւակներս են :

Պատուին պատճառաբանութիւնքը անվրճելի
էին : Ուստի ակամայ հեռացայ :

« Ազամալոյսին մէջ էինք : Ապտուլլան բերաւ
նոր աարաղս, զոր զէշ աղէկ վրաս յարմարցուցի :
Տունէն ելանք եւ՝ սնտուկներս առնելու համար՝ ուղ-
ղուեցանք զէպ ի խան, առաջնորդս խոկուն եւ ես կի-
սամես : Կարմիր ծրարիկը արիւնս չորցուցած էր :

« Հայոց թագը մտնելու վրայ էինք : Երբ հան-
դիպեցանք խումբ մը հրեայներու, ասոնք՝ անձայն,
անչչուկ՝ իբր ձակասաղբապէս գտտապարեակներ
— իբրևնց ետեւէն կը քաշկուտէին զիակներ, որոնց զը :

լուսններուն չարաշուք համաչափութեամբ մը քարե-
րուն զարնուելով ոստոսառւմը եւ փողոցին արիւնալի
խտուչներուն մէջ անկումը խուլ եւ հոծ ձայնով մը կը
խանդարէր գիշերափերջի լուսթիւնը եւ մահօտիթ ու-
ղեւորութեամբ մը կ'օժտէր ամայութիւնը թաղին, ու-
րուն բոլոր զուռները կօտրած եւ փողոցին մէջ նեա-
ուած էին: Շատ անգեր թանձրացած արիւնի մէջ կը
քայլէինք, եւ տաքերս մարմնոյ բեկորներուն կը բող-
բէին սաէպ:

«Անոր հասնելու մօտ էինք, երբ ողեսարսուս
հանգիւններ լսելով գլուխս վերցուցի եւ՝ արշալոյսի
աղօս լոյսով՝ ականաանս եղաց աննկարագրելի, ան-
լուր, հրէշային եղելութեան մը, որ ինձի կօրանցը-
նել տուաւ զգուշութեան եւ խոհեմութեան բնազդը:

«Թաղէն դուրս եւ խանէն քիչ մ'անցին, նախն Չաց
օրուան մարգասպանները՝ առանց խղճի եւ առանց
աարբական պատկառանքի՝ յետին մարտիրոսութեան
ենթարկած էին կիներ, աղջիկներ եւ մանուկներ:

«Ա՛լ անկարող ինքզինքս զտղելու բոլոր ուժու-
վըս փախայ:

«Կ'երեւայ թէ Ապաուլլան ետեւէս եկած էր, ու-
րովնեան երբ քաղաքէն դուրս ելայ, պառնուղիս քը-
ղանցքին բռնուիլը զգացի:

«— Փախչելովք մեծ անխոհեմութիւն ըրիք, ը-
սաւ ինձի, բարեբաղդաբար աղաքները դբաղեալ ըլ-
լալով, ուչազրութիւն չ'ըրին, եւ հրեայները խնստ
զազանապահ են: Հոս սպասէ՛, ես երթամ խրկելու
քու ձեզ, սնտուկներդ եւ մարդ մը, որ քեզ պիտի հաս-
ցընէ Տիարպէքիբի կարաւանին, որ քիչ մը հեռուն
իջեանած է:

«Ժամ մը ետքը ստրուանցի մը վրայ կը զանը-
ւէի, երբ արեւակարմիր երկինքը խաւարեցաւ թան-
ձրահոծ ծուխով մը, մինչդեռ անհուն աղէկէզ վճնա-
սուններ օդը կը թնդացնէին դժօրմբեր քրքիջներու
օրտաժուէքին մէջ:

«Մեծ ողբերգութեան վերջին անտարանն էր որ

կը ներկայացուէր: Ուրֆայի Հայոց եկեղեցին, զար
թիւրքերը եւ Համթիւնները քարեղով հրկիզած էին,
իր բոցարձակ փլատակներուն տակ կը թաղէր երկու
սեռէ եւ ամէն հասակէ ութը հազար անբազղներ զս-
րոնք կառավարութիւնը մղած եւ խմբած էր այդ սըր-
բավայրին մէջ:

«Նախնիներու եւ ոճիրներու այդ բոյնէն քառա-
սըմբակ հեռացայ սոսկումով եւ նողկանքով համակ-
ուած:»

Ալֆրէտ Պ. ի սլամաութիւնը լմնցած էր:

* * *

Հետեւեալ օր կատարեալ խնդ մը առաջնորդեցի
Աղէքսանդրիայ Հայկական պանդոկը:

Երկու օր ետքը, իր մէկ քանի բարեկամներուն
միջոցաւ տարուեցաւ զէպի Մարտէյլ, ուր կը զանուի
եղեր իր ընտանիքը մամանակէ մ'իվեր:

ՎԵՐՋԱՐԱՆ

Ուրֆայի կոտորածին այս մանրանկարը դարձնալ աչքիս առջև պարզուեցաւ երբ անցնալ օր թղթատարէն սաացայ երկու պահարանս Միոյն մէջ դրուած էր դրքոյի մը որ կը պատկերէր Պէյրուսի առաջնակարգ վարժարաններէն միոյն պարզեւարարական թեման մանրամասնութիւնը: Յիշեալ դրքոյի թղթատելով հանդիպեցայ հետեւեալ անուան, որ կապոյտ մատիտով բնագծուած էր:

«Գէորգ Խաչոհան, որբ, Ուրֆայի...» եւ՝ յետոյ՝ շահած մրցանակներուն թուումը:

Ուրֆայի որբը աշխատատէր կ'երեւայ, ինչ որ, մեղի յոյսը կուտայ որ պտառաբեր մի անդամը պիտի ըլլայ իր ազգին:

Երկրորդ պահարանին պարունակութիւնը՝ որ ֆրանսերէն է՝ բաւ առ բաւ կը թարգմանեմ հաս.

«Պէյրուս, 8 Սեպտ. 1901»

«Տէր Եւ Տիկին Հայկոյ Պ պատիւ ունին ձեզի ծանուցանելու իբեկց սրբոյ՝ Սլֆրէա Պ. ի ամուսնութիւնը, որ տեղի ունեցաւ ամսոյս շին, ընդ օրիորդ Նուարդ Խաչոհանի:»

Պատաւ թրքուհին իր խոտաւմը կատարած էր:

«Ազգային գրադարան»



NL0351893

504

9/1/24

1

49411